



Փոքրության դիալեկտիկա՝ պետականության կառուցումը Հարավային Կովկասում

Ասպետ Գոչիկեան

Համառոտագիր

Քաղաքագետների շրջանում ընդունված է տեսությունների ըմբռնումը կամ ստուգումը իրականացնել առանձին աշխարհագրական շրջանների ուսումնասիրման միջոցով: Այլ կերպ ասած՝ առանձին շրջանների ուսումնասիրումը կարող է նպաստել միջազգային հարաբերությունների և քաղաքագիտական հասկացությունների ըմբռնմանը:

Հոդվածը կանդրադառնա փոքր պետության գաղափարին և կփորձի պարզել, թե որքանով է տվյալ գաղափարը կիրառելի Հարավային Կովկասի պետությունների համար: Հոդվածի շրջանակներում փորձ է կատարվում գնահատել Հարավային Կովկասի նորանկախ պետությունների ստեղծման ազդեցությունը միջազգային հարաբերությունների ոլորտի ընկալման վրա: Չնայած այն բանին, որ ներկա միջազգային համակարգը զգալիորեն փոփոխվել է, ինքնին փոքր պետության գաղափարը և դրա հետ առնչվող խնդիրները մնացել են նույնը, և առ այսօր Հարավային Կովկասի պետությունները կանգնած են նմանատիպ հիմնախնդիրների առջև, որոնց բախվել են փոքր պետությունները պատմության ընթացքում:

Հոդվածը կփորձի պատասխանել հետևյալ հարցերին. ո՞րն է փոքր պետության գաղափարը, որքանով է տվյալ գաղափարը կիրառելի Կովկասի դեպքում և արդյո՞ք Հարավային Կովկասի պետությունները որևէ նոր երանգներ կհաղորդեն «փոքր պետություններ» հասկացությանը: